ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/152

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մաստերֆուդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5» ծածկագրով հրատապ մեկ անձից ձեռքբերման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.09.2019թ. թիվ ՊՆ/02/1791-2019 գրության հիման վրա, 17.09.2019թ. «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 17.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 24.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 24.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.10.2019թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2019թ. թիվ ՊՆ/02/1791-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և սպորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ 20.02.2019թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/2-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

2. «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի հետ 10.05.2019թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

3. «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

4. «Էրիզ» ՍՊԸ-ի հետ 14.01.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով գնման պայմանգիրը,

5. Ա/Ձ Արայիկ Աբրահամյանի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/15-2 ծածկագրով գնման պայմանգիրը,

6. Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանգիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի մասնակի լուծման վերաբերյալ գրությունները 06.09.2019թ. հրապարակվել են www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.09.2019թ. գրությամբ դիմել է «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 առ. 10.05.2019թ. պայմանագրի շրջանակներում մեր ընկերությունը 14.05.2019թ և 15.05.2019թ ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնել է համապատասխանաբար 14 500 կգ և 12 720 կգ սառեցրած ձուկ: Այնուհետև մեր տարածաշրջանում վերոնշյալ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան սառեցրած ձուկ չլինելու պատճառով մեր կողմից պատվիրվել է նոր խմբաքանակ, որը մատակարարել ենք 31.07.2019թ-ին: Վերջինս պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին մասամբ չի համապատասխանել, մասնավորապես մատակարարված խմբաքանակի մեջ չնչին քանակությամբ առկա էր 160 դրամից պակաս քաշով մսեղիքներ, սակայն որակապես համապատասխանում էր տեխնիկական բնութագրին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը մեր կողմից 31.07.2019թ-ին մատակարարված 20 000 կգ սառեցրած ձուկը չի ընդունել, որից 4 օր հետո փորձել ենք նոր խմբաքանակ մատակարարենք, սակայն մեր ընկերությանը նոր խմբաքանակ մատակարարելու հնարավորություն տալու փոխարեն սկսել է պայմանագրի միակողմանի մասնակի լուծման գործընթաց:

Հարկ եմ համարում նշել նաև, որ մեր կարծիքով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նմանօրինակ վարքագիծը կապված է սննդի մատուցման ծառայությունը քաղաքացիական կազմակերպությունների կողմից իրականացվելու պատճառով, քանի որ մեր կողմից մատակարարվելիք որոշ ապրանքների մասով ՀՀ ՊՆ-ի նախաձեռնությամբ, փոխադարձ համաձայնությամբ կրճատվել է:»:

4. <u>ՍՑ-LO-2019/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 17.05.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 10.05.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 8.1 կետի):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 17.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի փոփոխություն, համաձայն որի ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մի խմբաքանակի համար մինչև 17.05.2019թ.-ը, մյուսինը՝ մինչև 16.06.2019թ.-ը:

Փոփոխված հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման վայր (հասցե) նշված չէ:

«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 07.08.2019թ.-ի գրության համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 առ. 10.05.2019թ. պայմանագրի շրջանակներում վերջինս 31.07.2019թ-ին ՀՀ ՊՆ-ին մատակարարել է սառեցրած ձուկ, որը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին մասամբ չի համապատասխանում, մասնավորապես՝ հանձնված

խմբաքանակի մեջ առկա է 160 գրամից պակաս քաշով մսեղիքներ, սակայն որակապես համապատասխանում է տեխնիկական բնութագրին: Ընկերությունը պարտավորվում է վճարել պայմանագրով նախատեսված տույժերը և պատրաստ է ամբողջ խմբաքանակը 1339 ՀՀ դրամի փոխարեն մատակարարել 1320 ՀՀ դրամով: Նշել են նաև, որ տարածաշրջանում վերոնշյալ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան սառեցրած ձուկ գոյություն չունի և նոր խմբաքանակ պատվիրելու դեպքում այն կարող ենք մատակարարել մինչև սույն թվականի սեպտեմբերի 20-ը: Հաշվի առնելով վերոհիշյալ փաստարկները խնդրել են ընդունել Ընկերության կողմից հանձնված խմբաքանակը:

www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. մայիս-հունիս ամիսներին պետք է մատակարարեր 60000կգ ձուկ սառեցրած /Ձուկ սառեցրած ա/գ/, սակայն մատակարարվել է 27220 կգ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է N ՀԱԱԱՊՁԲ-7/5-1 պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հորվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի

ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 17.05.2019թ.-ը (Պայմանագիրը ուժի մեջ է մտել այս ստորագրելու օրը՝ 10.05.2019թ.-ին, համաձայն՝ Պայմանագրի 8.1 կետի):

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 17.05.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի փոփոխություն, համաձայն որի ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մի խմբաքանակի համար մինչև 17.05.2019թ.-ը, մյուսինը՝ մինչև 16.06.2019թ.-ը:

Ընդ որում՝ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե: Իսկ արդեն փոփոխված հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման վայր (հասցե) չի նշվել:

«Մաստերֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 07.08.2019թ.-ի գրության համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 առ. 10.05.2019թ. պայմանագրի շրջանակներում վերջինս 31.07.2019թ-ին ՀՀ ՊՆ-ին մատակարարել է սառեցրած ձուկ, որը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին մասամբ չի համապատասխանում, մասնավորապես՝ հանձնված խմբաքանակի մեջ առկա է 160 գրամից պակաս քաշով մսեղիքներ, սակայն որակապես համապատասխանում է տեխնիկական բնութագրին: Ընկերությունը պարտավորվում է

վճարել պայմանագրով նախատեսված տույժերը և պատրաստ է ամբողջ խմբաքանակը 1339 ՀՀ դրամի փոխարեն մատակարարել 1320 ՀՀ դրամով: Նշել են նաև, որ տարածաշրջանում վերոնշյալ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան սառեցրած ձուկ գոյություն չունի և նոր խմբաքանակ պատվիրելու դեպքում այն կարող ենք մատակարարել մինչև սույն թվականի սեպտեմբերի 20-ը: Հաշվի առնելով վերոհիշյալ փաստարկները խնդրել են ընդունել Ընկերության կողմից հանձնված խմբաքանակը:

www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. մայիս-հունիս ամիսներին պետք է մատակարարեր 60000կգ ձուկ սառեցրած /Ձուկ սառեցրած ա/գ/, սակայն մատակարարվել է 27220 կգ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է N ՀԱԱԱՊՁԲ-7/5-1 պայմանագիրը:

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-7/5-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի փոփոխության արդյունքում՝ Հավելված 1-ով հասցե չնշելով, ըստ էության, զրկելով Մասնակցին մատակարարման վայրը իմանալու հնարավորությունից, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրի Մասնակցի վրա դրված պարտավորությունների խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի գործողությունների արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված գնումների գործընացին ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ուստի, նման պայմաններում, Մասնակցի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, և որպես հետևանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Մաստերֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**